

### Օրերի հետ

#### Թալեաթի փաստաթուղթը ցնցող բացահայտում է

«Նյու Յորք թայմսի» մարտի 8-ի համարը հրատարակեց ցնցող մի գրություն, որն աներկբայորեն ապացուցում է Օսմանյան թուրքիայում հայերին բաժին ընկած ցեղասպանության կազմակերպված բնույթը, գրում է «Արմինյան միությունը» շաբաթաթերթի մարտի 21-ի համարում Ամերիկայի հայկական համագումարի տնօրենների խորհրդի նախկին նախագահ ժիրայր Հարությունյանը: Ստորև բարձրանաբար հատվածներ նրա գրությունից:



«Մոռացության մատնված զոհեր» հոդվածում Ստամբուլից թերթի թղթակից Սաբրինե Թավերնիսը գրում է Թալեաթ փաշայի անձնակազմի գրադարանից վերցրած մի մերկացող փաստաթղթի մասին, որտեղ նշված է, որ 1915-ին Անատոլիայում բնակվել է 1.256.000 հայ, մինչդեռ 1916-ի վերջում այդ թիվը զգալիորեն նվազել է 284.157-ի: 972 հազար հայեր «հանկարծակի անհետացել են»:

Հայոց ցեղասպանության ճանաչման մասնագետներից Հիլմար Քայզերը այդ առթիվ ասել է. «Թվերը հաստատ նշված են այստեղ: Հնարավոր չէ մեկ միլիոն մարդու բացթողնել»:

Փաստաթուղթը երևան հանողը թուրք գրող Մուրատ Բարդակչին է, որ հունվարին Թալեաթի կնոջից ձեռք բերած այդ և այլ փաստաթղթերը հրապարակել է «Թալեաթ փաշայի մնացյալ փաստաթղթերը» վերնագրով գործում:

Այդ մասին միայն մեկ թերթ՝ «Միլիթերն» է գրել թուրքիայում: Մյուսները լռություն են պահպանել անցած երկուսուկես ամիսների ընթացքում: Բարդակչին մեկնաբանել է երևույթը ասելով, «որ մարդիկ դեռ պատրաստ չեն այդ մասին խոսելու»: Բայց նա «Նյու Յորք Թայմսի» լրագրողին ասել է, որ տեղահանություններն արդարացված էին, քանի որ «հայերը բացահայտորեն պաշտպանում էին Ռուսաստանին»:

Չարգվածային լրատվության միջոցների լռությունը, ինչպես նաև Բարդակչիի մեկնաբանությունը հետևանք են թուրքիայում գոյություն ունեցող «զանգվածային կարծատեսության» հոգեբանական համախտանիշի: Նույնիսկ «ներողության ակցիան» ստորագրող թուրքերը խուսափել էին «ցեղասպանություն» բառն օգտագործելուց: Այդ բառը «տաբու» է թուրքիայում:

Թուրքիայի ղեկավարները հուսահատ քայլեր են անում թաքցնելու ակնհայտը: Բայց քաղաքական իրադրությունը փոխվել է: Բուշի վարչակազմն այլևս չկա: Նախագահ Օբամայի, փոխնախագահ Բայդենի և պետարտուղար Հիլնթոնի դիրքորոշումները հստակ են և միանշանակ: Իսկ վերոնշյալ փաստաթղթի «Նյու Յորք թայմսում» հրատարակելուց հետո էլ ավելի դժվար է լինելու միտել ցեղասպանության փաստը:

Թարգմ. Հ.Ծ.



### ՄՐՈՔ 13 ԴՄԱ 13

#### Прилагательное и его употребление

Прилагательное в армянском языке, в отличие от русского, не изменяется, т. е. не согласуется с определяемым существительным в роде, числе и падеже, например: բարի մարդ [бари март] добрый человек – բարի մարդիկ [бари март'ик] добрые люди Նա ունի բարի մարդու համբավ: [на уни бари март'у хамбав] За ним слава доброго человека.

սև մատիտ [սэв матит] черный карандаш սև մատիտներ [սэв матитнэр] черные карандаши Ես գրում եմ սև մատիտով: [ес гырум эм сэв матитов] Я пишу черным карандашом. Заметьте, что в армянском языке нет согласованного определения.

В предложении прилагательное обычно выступает в роли определения и ставится перед существительным: Կապույտ երկնքում փայլում է արևը: [капуйт еркынк'ум пайлум э арэвы] В синем небе сияет солнце.

Ես ապրում եմ նոր շենքում: [ес апрум эм нор шэнк'ум] Я живу в новом здании.

Прилагательное в сочетании с глаголом է могут выступать в функции составного имен-

ного сказуемого, например: Մատիտը սև է: Карандаш черный. Ենթը նոր է: Здание новое.

Обратите внимание, что прилагательные в этой функции тоже не изменяются, ср. Փողոցը լայն է: [p'ox'oციլფին է] Улицы широкая. Փողոցները լայն են: [p'ox'oցնэры лайн эн] Улицы широкие.

Помните, что в армянском языке в составном именном сказуемом вспомогательный глагол է никогда не опускается.

В отличие от русского, в армянском языке некоторые качественные прилагательные, не изменяясь, могут употребляться также как наречия, определяя глагол, ср. например:

գեղեցիկ երեխա [гэх'эцик ерэха] красивый ребенок, գեղեցիկ գրել [гэх'эцик гырэլ] красиво писать, լավ ընկեր [лав ынкэр] хороший товарищ, լավ երգել [лав ерк'эл] хорошо петь

Նա լավ ընկեր է: [на лав ынкэр է] Он хороший товарищ. Նա շատ լավ է երգում: [на шат лав э ерк'ум] Он очень хорошо поет. Ինչ գեղեցիկ մայրամուտ է: [ինչ гэхэцик майрамут է] Какой красивый закат! Նա գեղեցիկ է գրում: [на гэх'эцик э гырум] Он красиво пишет.

Прилагательное լավ в разговорной речи часто употребляется для выражения согласия и соответствует русскому хорошо, например:

- Գնանք կին: – Пойдем в кино. [гынанк' кино] - Լավ: – Хорошо.

#### Образование прилагательных

Прилагательные в армянском языке бывают простыми и составными.

Простые прилагательные не имеют специальных форм и по форме не отличаются от существительных, сравните: բարի [бари] добрый, տարի [тари] год, լավ [лав] хороший, նավ [нав] судно

Составные прилагательные могут быть сложными и суффиксальными. Сложные прилагательные, как и простые, по форме не отличаются от существительных, сравните: եռահարկ [եր'ахарк] (прилагательное) трехэтажный [հարկ-этаж] и գետնահարկ [гэтнахарк] (существительное) подвальный этаж.

Суффиксальные прилагательные образуются при помощи специальных суффиксов, которые и являются формальными показателями прилагательных. Эти суффиксы образуют прилагательные от других частей речи, в основном от существительных и глаголов, например:

քաղաք [к'ах'ак'] город – քաղաքական [к'ах'ак'акан] политический, քաղաքային [к'ах'ак'айин] городской; սիրել [сирэл] любить – սիրելի [сирэли] любимый.

Наиболее употребительными суффиксами, образу-

ющими прилагательные, являются:

–ական – ընկեր [ынкэр] товарищ – ընկերական [ынкэրакан] товарищеский, ռուս [p'ус] русский – ռուսական [p'усакан] русский, հայ [hay] армянин – հայկական [хайкакан] армянский –ային – տուն [тун] дом – տնային [тынайин] домашний, աշուն [ашун] осень – աշնանային [ашнанайин] осенний

–յան – Երևան [երэван] Ереван – երևանյան [երэванйан] ереванский, Մոսկվա [моск-ва] Москва – մոսկովյան [московйан] московский

В образовании прилагательных большую роль играет приставка ան-, которая присоединяется к основам существительного, прилагательного или глагола и образует прилагательное с отрицательным значением; соответствует русским без- и не- например:

տուն-անտուն [бездомный], իմաստ [имаст] смысл – անիմաստ [анимаст] бессмысленный.

К суффиксам прилагательного относится также –իկ, который имеет уменьшительно-ласкательное значение: սիրուն [сирюни] красивый – սիրունիկ [сирюнилик] красивый, хорошенкый, քաղք [к'ах'цыр] сладкий – քաղքիկ [к'ах'цырик] сладенький.

Курс ведет Армине ОВСЕПЯН



## ԱՄՏԾՈՆ ՏԱՍԸ ՊԱՏԿԻՐԱՆՆԵՐԸ

### 8 Մի՛ գողացիր

Այս պատվիրանն արգելում է որևէ մեկից ինչ-որ բան գողանալ, խլել կամ գաղտնի խաբեությամբ կորզել՝ չափման միավորներով խաբելով, ապրանքները կամ նրանց գները կեղծելով, վարձն ուշացնելով և չվճարելով. գողություն է մաս երկրի ավանդ ու հարստությունը թալանելը, մարդկանց պարտքերը չտալը, կեղծ դրամով և փաստաթղթերով վճարելը, առևտրական պայմանավորվածությունները խախտելը և այլն: Չըրկվածների և թալանվածների գանգատը միշտ լսելի է Տիրոջ ականջին, և մեղավորների պատիժն անխուսափելի է. «Հարուստներ, լա՛ց եղեք և ողբացե՛ք այն թշվառությունների համար, որ գալու են ձեր գլխին. որովհետև ձեր հարստությունը փտած է: Ահավասիկ ձեր դաշտերը մշակած մշակների վարձը մեզ մոտ պահեցիք. ձեր կողմից գրկվածն աղաղակում է, և հնձվորների բողբոջը հասավ Ամենակալ Տիրոջ ականջին» (Հակ. Ե 1,4) «Եվ տեսա, ահա մի թռչող գերանդի: Հրեշտակն ասաց ինձ. «Ի՛նչ ես տեսնում». ասացի. «Թռչող գերանդի եմ տեսնում՝ քսան կանգուն երկարությամբ և տասը կանգուն լայնությամբ»: Ասաց ինձ. «Դա այն անծոթն է, որ տարածվում է ամբողջ երկրի երեսին, որովհետև ամեն գողի մահացու պատիժը դրանով պիտի իրագործվի: Ես պիտի հանեմ դա, - ասում է ամենակալ Տերը, - և այն պիտի մտնի գողերի տունը, պիտի մնա նրանց տանը և պիտի սպառի այն» (Չաք. Ե 1-4): Գողություն է կրոնական, պատմական, մշակութային, գիտական, ազգային, պետական և հասարակական արժեքները կամ հարստությունը հափշտակելը,

ինչպես նաև դրանք գաղտնի և անտեղի օգտագործելը, վնասելը, կեղծելը և իրենց վերագրելը: Այս մեղքի մեջ են մտնում նրանք, ովքեր տարբեր տեսակի կաշառքներով պաշտոն, աշխատանք, դիրք և բարեկեցություն են ձեռք բերում, զեղծում են ճշմարտությունը և անարդարացի գործեր անում. ովքեր գողերին և ավազակներին, ինչպես նաև նրանց ապօրինի ավարներն իրենց մոտ են թաքցնում, այնուհետև գողացած իրերը վաճառում կամ գնում. ովքեր ժխտություն կամ շռայլության պատճառով վնաս են հասցնում իրենց և իրենց հարազատների առողջությանը, չեն օգնում և ցավակցում կամ գնում. ովքեր ժխտություն կամ շռայլության պատճառով վնաս են հասցնում իրենց և իրենց հարազատների առողջությանը, չեն օգնում և ցավակցում խեղճ, կարիքավոր և աղքատ մարդկանց, Աստծո շնորհածր բարի նպատակներով չեն օգտագործում, այլ տրվում են զեխության, խաղաճություն, արեքության և ցուփության:

Գողության բացառիկ դեպքեր կան, որոնք մեղք չեն համարվում և չեն պատժվում: Առաջինն այն է, երբ բարկացած, մոլեգնած, հուսահատված, հոգեկան անկառավարելի և մտավոր անգիտակցական վիճակում գտնվող մարդկանցից գողանում, թաքցնում են զենքերը կամ որևէ այլ բան, որով մա կարող է վնաս հասցնել իր կամ մեկ ուրիշի կյանքին: Այս պարագայում սա գողություն չէ, այլ զգուշություն: Մյուս դեպքն այն է, որ երբ որևէ մեկը սովամահ չլինելու համար հաց կամ որևէ սնունդ է վերցնում-ուտում կամ տալիս իր նման սովամահ լինող մեկին. սա անհրաժեշտություն է և ոչ թե գողություն: Վերջին դեպքն այն է, երբ դա կատարվում է հրամանով, օրինակ՝ իսրայելացիները այդուհետև վարձ վերցրին

եզիպտացիների թանկարժեք զարդերը, երբ դուրս եկան Եգիպտոսից, և այլևս չվերադարձրին. «Իսրայելացիներն արեցին այնպես, որ ինչպես իրենց հրամայել էր Մովսեսը. եզիպտացիներից նրանք ուզեցին ոսկե, արծաթե զարդեր ու զգեստներ: Տերը շնորհը եզիպտացիների առաջ պարզեց իր ժողովրդին. սրանք զարդեր տվեցին նրանց» (Ել. ԺԲ 35-36): Բոլոր մնացյալ դեպքերում գողությունը ծանր մեղք է համարվում և արժանի է պատժի:

Գողությունն ի հայտ է գալիս հետևյալ պատճառներով: Նախ՝ վատ դաստիարակությունից, երբ մարդիկ վաղ հասակից Աստծո երկյուղով չեն կրթվում և մեծանում են առանց օգտակար մասնագիտությամբ կամ արհեստ ձեռք բերելու. ապա՝ ծուլությունից, ցուփությունից, անպատակ ապրելու ցանկությունից և, անշուշտ, ազախությունից և ընչասիրությունից: Այս չարիքից ձերբազատվելու համար պետք է նախ զոջալ արածի համար, խոստովանել և գողացածը վերադարձնել կամ ինչ-որ ձևով փոխհատուցել Տիրոջը, իսկ եթե հնարավոր չէ Տիրոջը վերադարձնել գողացածը, ապա լավ կլինի այն տալ մի աղքատի կամ եկեղեցու: Պետք է հեռու մնալ այս մեղքերից և կատարել սրան հակառակ այն առաքինությունները, որ պատվիրում է մեզ Աստված՝ ողորմածություն, արդարություն, հավատարմություն, առատածեռություն, անշահախնդրություն, հոգատարություն խեղճերի և տկարների նկատմամբ, որպեսզի արժանի լինենք Տիրոջ ողորմությանն ու գթությանը:

Օրհնությամբ և աղոթքով՝ Տեր Ամանիա քին Բաբայան